ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Ղարագյոզյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 02Ա-047503)

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 29.05.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 29.05.2019թ.)

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ՝

Հ. Ավետիսյանի (լիազորագիր, տրված՝ 29.05.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8665-2019 գրությամբ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 21.05.2019թ. թիվ 20/393 գրության հիման վրա, 24.05.2019թ. թիվ 26/26-1/8665-2019

գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.06.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

2019թ. մարտի 15-ին «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր)՝ երկու ապրանքատեսակի մասով՝ ամենօրյա կոշկեղեն և կիսաճտկավոր կոշիկ:

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ...)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ...):

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-

ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Կնքված պայմանագրով նախատեսված կիսաճտքավոր կոշիկների առաջին փուլի մատակարարումը «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է սահմանված ժամկետում, այն է՝ ապրիլ ամսին, մատակարարվել է նախ՝ 603 զույգ կիսաճտկավոր կոշիկ, իսկ այնուհետև՝ 581 զույգ կիսաճտկավոր կոշիկ: Նշված ապրանքի մատակարարման արդյունքում կնքված պայմանագրով նախատեսված կարգով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ. և 24.04.2019թ. Պատվիրատուին է ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրությունները՝ հավելված N 3 (կցվում են):

Սույն դիրքորոշումը ներկայացնելու օրվա դրությամբ 18.04.2019թ. և 24.04.2019թ. Պատվիրատուին ներկայացրած հանձնման-ընդունման արձանագրությունները ոչ ընդունվել են Պատվիրատուի կողմից, ոչ էլ բացասական եզրակացությամբ ետ վերադարձվել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին:

«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն 15.05.2019թ. գրությամբ (կցվում է) դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և վկայակոչելով Պայմանագրի վերոթվարկված կետերը և հիմք ընդունելով Պայմանագրի 5.4-րդ կետը՝ խնդրել է կատարել վճարում «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից առաջին փուլով մատակարարված 603 զույգ և 581 զույգ կիսաճտկավոր կոշիկների համար:

www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջև 2019թ. մարտի 15-ին կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով պայմանագիրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 16.05.2019թ. միակողմանի մասնակի լուծվել է Պայմանագիրը՝ կիսաճտքավոր կոշիկի մասով՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի «ա» ենթակետի հիմքով (գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը): Պայմանագրի միակողմանի լուծման գրության մեջ նշված է, որ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից առաջին փուլով մատակարարված 603 զույգ կիսաճտկավոր կոշիկը, իսկ այնուհետև՝ 581 զույգ կիսաճտկավոր կոշիկը չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջև 2019թ. մարտի 15-ին կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով պայմանագիրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 16.05.2019թ. միակողմանի լուծվել է՝ կիսաճտքավոր կոշիկի մասով, Պայմանագրի 2.1.7-րդ կետի ուժով: Պայմանագրի միակողմանի լուծման գրության մեջ նշված է, որ «Աշոտ

Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից առաջին փուլով մատակարարված 603 զույգ կիսաճտքավոր կոշիկը, իսկ այնուհետև՝ 581 զույգ կիսաճտքավոր կոշիկները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Համաձայն պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Իսկ նույն պայմանագրի 2.1.7-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ...)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

Պայմանագրի 5.2-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին

հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Միևնույն ժամանակ, Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ կնքված պայմանագրով նախատեսված կիսաճտկավոր կոշիկների առաջին փուլի մատակարարումը «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է սահմանված ժամկետում, այն է՝ ապրիլ ամսին, մատակարարվել է նախ՝ 603 զույգ կիսաճտքավոր կոշիկ, իսկ այնուհետև՝ 581 զույգ կիսաճտկավոր կոշիկ: Նշված ապրանքի մատակարարման արդյունքում կնքված պայմանագրով նախատեսված կարգով՝ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ. և 24.04.2019թ. Պատվիրատուին է ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրությունները՝ հավելված N 3: Նշված հանձնման-ընդունման արձանագրությունների առկայության և Պատվիրատուին ներկայացնելու փաստը հաստատվում է նաև www.armeps.am կայքից արված համապատասխան արտատպումով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված 03.06.2019թ. թիվ 26/9190-2019 գրությամբ /կցվում է/:

Սակայն 18.04.2019թ. և 24.04.2019թ. Պատվիրատուին ներկայացրած հանձնման-ընդունման արձանագրությունները ոչ ընդունվել են Պատվիրատուի կողմից, ոչ էլ բացասական եզրակացությամբ ետ վերադարձվել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին, իսկ համակարգում դրանք ունեն «Չվճռված» կարգավիճակ:

Չստանալով մատակարարված ապրանքի դիմաց որևէ վճարում՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն 15.05.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և վկայակոչելով Պայմանագրի վերոթվարկված կետերը և հիմք ընդունելով Պայմանագրի 5.4-րդ կետը՝ խնդրել է կատարել վճարում «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից առաջին փուլով մատակարարված 603 զույգ և 581 զույգ կիսաճտքավոր կոշիկների համար:

Փաստացիորեն ստացվում է մի իրավիճակ, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ստանալով «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն 15.05.2019թ. գրությունը՝

վճարում կատարելու պահանջով, անմիջապես հաջորդ օրը, այսինքն ապրանքի մատակարարումից և հանձնման-ընդունման արձանագրությունները ներկայացնելուց գրեթե մեկ ամիս հետո, նշված ապրանքների մասով միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Մինչդեռ, Պայմանագրի 5.3-րդ կետի ուժով, եթե մատակարարված ապրանքը չի համապատասխանել պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չպետք է ստորագրեր հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ վերադարձներ հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Մինչդեռ Պատվիրատուն էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ չի վերադարձրել հանձնման-ընդունման արձանագրությունը և չի տրամադրել դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ինչը Պայմանագրի համաձայն՝ պետք է կատարվեր արձանագրությունները ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Սակայն Պայմանագրի 5.4-րդ կետը իմպերատիվ սահմանում է, որ եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում (5 աշխատանքային օրվա ընթացքում) Գնորդը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված:

Այսպիսով, Պայմանագրի վերոհիշյալ կետերի ուժով «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ., և 24.04.2019թ. հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա մատակարարված 603 զույգ կիսաճտկավոր կոշիկը և 581 զույգ կիսաճտկավոր կոշիկը համարվում է ընդունված Գնորդի կողմից՝ 18.04.2019թ. մասով՝ համապատասխանաբար՝ 29.04.2019թ., իսկ 24.04.2019թ.՝ համապատասխանաբար՝ 03.05.2019թ.:

Մինչդեռ, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միայն 16.05.2019թ. որոշել է լուծել պայմանագիրը՝ մատակարարված 603 զույգ և 581 զույգ կիսաճտկավոր կոշիկի մասով, որը պայմանագրի համաձայն համարվել է Պատվիրատուի կողմից ընդունված՝ դեռևս 29.04.2019թ. և 03.05.2019թ.:

Ավելին, «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն, կատարելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ» ծածկագրով պայմանագրի շրջանակներում իր վրա դրված պարտականությունները և դրա դիմաց ակնկալելով ստանալ համապատասխան վճարումներ, բավականանին երկար ժամանակ սպասել է, որ Պատվիրատուն կատարի նշված մատուցված ծառայությունների դիմաց վճարումները՝ Պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված կարգով:

Տեսնելով, որ վճարումները, այնուամենայնիվ չեն կատարվում և բազմաթիվ անգամ դիմելով Պատվիրատուին՝ խնդրելով կատարել նշված վճարումները, «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին 15.05.2019թ. ուղված գրությամբ ներկայացրել է վերոնշված փաստական հանգամանքները և խնդրել կատարել համապատասխան վճարումներ /կցվում է/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Փաստորեն, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով՝ այն է, պայմանագրի ուժով ընդունված ծառայության դիմաց սահմանված ժամկետում վճարում չկատարելու արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղ. օր-ի 466-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի էական խախտում, քանզի այն հանգեցրել է «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Արդյունքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման և թույլ տված անգործության հետևանքով այսօր «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն հայտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթներում արդեն իսկ քննվել են նմանատիպ երկու ընթացակարգեր, մասնավորապես՝ ՍՑ-ՆԳ-2019/15 և ՍՑ-ՆԳ-2019/17, որոնց վերաբերյալ կայացրած որոշմամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը արձանագրել է հետևյալը.

«Ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Պատվիրատուն 20.07.2018թ. թիվ ԴԴ-Յ-Ե-5592 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին թղթային եղանակով վերադարձրել է վերջինիս կողմից ներկայացված հարկային հաշիվը, հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստելու վերաբերյալ ակտը, այնուամենայնիվ, Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված ծառայության հանձնման և ընդունման կարգը սահմանող 3-րդ կետը հստակ նախատեսում է, որ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, որը սակայն տեղի չի ունեցել:

Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից իր և ՀՀ դատական դեպարտամենտի միջև 13.04.2018թ. կնքված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01-2» ծածկագրով պայմանագրի էական խախտման փաստը, հետևաբար նաև Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1 ին մասի 6 րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը ու փաստական հանգամանքները, ինչպես նաև նույն փաստական հանգամանքներում թիվ ՍՑ-ՆԳ-2019/15 և թիվ ՍՑ-ՆԳ-2019/17 ընթացակարգերով կայացրած որոշումները և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում

ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/58 ընթացակարգի շրջանակներում 31.05.2019թ. ժամը 10:10-ին և 14.06.2019թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2019թ. թիվ 20/393 գրությամբ ներկայացրել է «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/58 ընթացակարգի շրջանակներում 31.05.2019թ. ժամը 10:10-ին և 14.06.2019թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման դեմ հայտնելով, որ Ընկերության կողմից մատակարարված ապրանքն ընդունվել է ի պահ և ուղարկվել է փորձաքննության, որի արդյունքում պարզվել է, որ ապրանքը չի համապատասխանում պայմանագրի պահանջներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննությունը տևել է մոտ քսան օր, ուստի քանի դեռ Պատվիրատուն չուներ եզրակացություն ապրանքի որակի վերաբերյալ, չէր կարող մերժել կամ ընդունել մատակարարված ապրանքը: Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ իբրև թե Ընկերությունը մատակարարված ապրանքի հետ մեկտեղ հանձնել է նաև եզրակացություն ապրանքի որակի վերաբերյալ, չի համապատասխանում իրականությանը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի միջև 15.03.2018թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ/3» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին ուղղված 16.05.2019թ. թիվ 20/384 գրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջը, միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ 2204 զույգ կիսաճտքավոր կոշիկի մասով, Պայմանագիրը համապատասխանաբար համարելով մասնակի լուծված:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8665-2019 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 21.05.2019թ. թիվ 20/393 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի միջև 15.03.2018թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ/3» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել 2204 զույգ կիսաճտքավոր կոշիկ, որից 1184 զույգի մատակարարման ժամկետը սահմանվել է 31.03.2019թ., իսկ 1020 զույգի համար՝ 30.04.2019թ.:

Կողմերի միջև 27.03.2019թ. կնքված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրով ապրանքի առաջին խմբաքանակի համար նախատեսված մատակարարման ժամկետն երկարաձգվել է մինչև 25.04.2019թ.:

Ընկերությանն ուղղված 03.04.2019թ. թիվ 20/222 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից մատակարարված կիսաճտքավոր կոշիկների նմուշներն ուղարկվել են լաբորատոր հետազոտման «Սիստեմէքս» ՍՊԸ փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված նմուշներն անպատշաճ որակի են՝ որոշ ցուցանիշներ (կիսաճտքավոր կոշիկի կաշին հիդրոֆոբիկ չէ, լեզվակը փակ փական չէ, ճիտքերի բարձրությունը կարճ է) չեն համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին: Փորձագիտական եզրակացության արդյունքների պատճենները Ընկերությանը տրամադրվել են նախօրոք:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանն առաջարկել է ողջամիտ ժամկետում վերացնել տեղ գտած անհամապատասխանությունները և սահմանված ժամկետում մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան կոշկեղեն ըստ ժամանակացույցի և Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

Ընկերությանն ուղղված 16.05.2019թ. թիվ 20/384 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությանն 03.04.2019թ. առաջարկվել է ողջամիտ ժամկետում վերացնել մատակարարված կոշկեղենում տեղ գտած անհամապատասխանությունները և սահմանված ժամկետում մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխանող կոշկեղեն: Ընկերությունը 15.04.2019թ. մատակարարել է 603 զույգ, իսկ 25.04.2019թ.՝ 581 զույգ կիսաճտքավոր կոշիկ, որը Պատվիրատուի կողմից ընդունվել է ի պահ: Նշված առաջին խմբաքանակից 2 զույգ կիսաճտքավոր կոշիկ 18.04.2019թ. ներկայացվել է փորձաքննության «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, որի կողմից 08.05.2019թ. տրված փորձագիտական եզրակացության համաձայն՝ կիսաճտքավոր կոշիկի էական ցուցանիշները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի համապատասխան ցուցանիշներին:

Նույն գրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջը, միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված Պայմանագրից՝ 6-րդ չափաբաժնի մասով՝ 2204 զույգ կիսաճտքավոր կոշիկի մասով, Պայմանագիրը համապատասխանաբար համարելով մասնակի լուծված:

Այսպիսով՝ Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով, հստակ սահմանվել են այն հատկանիշները, որոնց պետք է համապատասխանի մատակարարվող ապրանքը:

Պայմանագրի N 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի 6-րդ չափաբաժնով Ընկերությունը պարտավորվել է մատակարարել համապատասխան քանակի կիսաճտքավոր կոշիկներ:

Պայմանագրի 4-րդ կետի 2.4.5 ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ***պայմանագրով նախատեսված որակի*** և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե հանձնվել է ***անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ գնորդն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ*** և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին ուղղված 03.04.2019թ. թիվ 20/222 գրությամբ հայտնել է, որ «Սիստեմէքս» ՍՊԸ փորձագիտական եզրակացության համաձայն՝ Ընկերության կողմից մատակարարված ապրանքը որակի որոշ ցուցանիշներով չի համապատասխանում Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանն առաջարկել է ողջամիտ ժամկետում վերացնել տեղ գտած անհամապատասխանությունները և սահմանված ժամկետում մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան կոշկեղեն ըստ ժամանակացույցի և Պայմանագրի 2.4.5 կետի համաձայն տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

Միևնույն ժամանակ գործում առկա է նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 08.05.2019թ. եզրակացությունը, որի համաձայն՝ ՀՀ ԱԱԾ լիազորված անձ Լ. Ստեփանյանի 18.04.2019թ. դիմումի հիման վրա «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է թվով 2 զույգ կիսաճտքավոր կոշիկի ապրանքագիտական և նյութագիտական համալիր փորձաքննություն:

Փորձաքննության ընթացքում իրականացված հետազոտության արդյունքում արձանագրվել է փորձաքննությանը տրամադրված հետազոտելի օբյեկտ հանդիսացող

կիսաճտքավոր կոշիկների տեխնիկական բնութագրով սահմանված ցուցանիշների համապատասխանությունները և հետազոտության արդյունքով պարզված անհամապատասխանությունները, մասնավորապես արձանագրվել է, որ կիսաճտքավոր կոշիկի կաշին ոչ հիդրոֆոբ է, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է բարձրորակ հիդրոֆոբ կաշի, երեսամասի և ետնամասի արտաքին գոտու կաշվի հաստությունը կազմում է 1.68 մմ և 1.75 մմ, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է 2 մմ, ճտքերի կաշվի հաստությունը կազմում է 1.61 մմ, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է 1.8 մմ, քուղերի երկարությունը կազմում է 133-141 սմ, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է ոչ պակաս 150 սմ, քուղերի լայնությունը կազմում է 6-8 մմ, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է 3.5-5 մմ տրամագիծ, լեզվակի նյութը պոլիմերատիպ նյութից է, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է եռաշերտ կիրզա, միջատակի ստվարաթուղթ նախատեսված չէ կոշիկների համար, մինչդեռ տեխնիկական բնութագրով պահանջվել է կոշիկների համար նախատեսված ստվարաթուղթ:

Այսպիսով՝ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից մատակարարված «կիսաճտքավոր կոշիկ» ապրանքատեսակի համապատասխան խմբաքանակը համաձայն «Սիստեմէքս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացության մի շարք ցուցանիշներով չի համապատասխանել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին: Այնուհետև Պատվիրատուի կողմից Ընկերության համար սահմանվել է ողջամիտ ժամկետ թերությունները վերացնելու համար: Սակայն Ընկերության կողմից կրկին մատակարարված ապրանքը «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 08.05.2019թ. եզրակացության նույնպես չի համապատասխանել Պայմանագրի տեխնիկական բնութագրին:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը, Պայմանագիրը 6-րդ չափաբաժնի մասով լուծել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ն թույլ է տվել վերջինիս և ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջև 15.03.2018թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ և ԿՈՇԿԵՂԵՆ/3» պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Հետևաբար, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Միաժամանակ անդրադառնալով Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմանը Պայմանագրի 5.4-րդ կետի կիրառելիության վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ ենթակետի սահմանում է, որ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման

արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Նույն կետի 5.2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Նույն կետի 5.4-րդ ենթակետը սահմանում է, որ եթե պայմանագրի 5.2-րդ կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Ընկերությունը հայտնել է, որ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ ապրիլ ամսին, մատակարարված նախ՝ 603 զույգ կիսաճտքավոր կոշիկի, իսկ այնուհետև՝ 581 զույգ կիսաճտքավոր կոշիկի հանձնման-ընդունման արձանագրությունները 18.04.2019թ. և 24.04.2019թ. Պատվիրատուին են ներկայացվել ARMEPS համակարգի միջոցով, որոնք ոչ ընդունվել են Պատվիրատուի կողմից, ոչ էլ բացասական եզրակացությամբ ետ վերադարձվել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին: Նշված փաստը հավաստվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության 03.06.2019թ. թիվ 26/9190-2019 գրությամբ, որի համաձայն նշված արձանագրություններն ունեն «չվճռված» կարգավիճակ:

Ընկերությունը գտնում է, որ Պայմանագրի 5.4-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից մատակարարված ապրանքը համարվում է ընդունված, քանի որ Պատվիրատուն

սահմանված ժամկետում Պայմանագրի 5.2-րդ ենթակետի համաձայն չի ընդունել կամ չի մերժել Ընկերության կողմից Armeps էլեկտրոնային համակարգ մուտք արված հանձնման-ընդունման արձանագրությունները:

Այս տեսանկյունից հայտնում եմ հետևյալը.

Պայմանագրի 2.4-րդ կետի 2.4.5-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված ***որակի ապրանք:***

Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են այն հիմնական հատկանիշները, որոնց պետք է համապատասխանի Ընկերության կողմից մատակարարվելիք «կիսաճտքավոր կոշիկ» ապրանքատեսակը: Ընդ որում՝ նշված պարամետրերը վերաբերում են ոչ միայն ապրանքի արտաքին զննության արդյունքում հայտնաբերվող տեսանելի հատկանիշներին, այլև նաև որակի հետ կապված այնպիսի հատկանիշներին, որոնք կարող են հայտնաբերվել միայն մասնագիտական հատուկ հետազոտության արդյունքում:

Ընկերության կողմից հերթական անգամ մատակարարված «կիսաճտքավոր կոշիկ» ապրանքատեսակի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանությունը որոշելու նպատակով փորձաքննություն իրականացնելու համար Պատվիրատուն 18.04.2019թ. դիմել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Ընկերությունը հայտնել է, որ ապրանքի հանձնման-ընդունման արձանագրությունները **18.04.2019թ. և 24.04.2019թ.** Պատվիրատուին են ներկայացվել ARMEPS համակարգի միջոցով, որոնք 5 աշխատանքային օրվա ընթացքում ոչ ընդունվել են Պատվիրատուի կողմից, ոչ էլ բացասական եզրակացությամբ ետ վերադարձվել «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին: Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ վերոհիշյալ փորձաքննությունը **սկսվել է 19.04.2019թ. և ավարտվել 08.05.2019թ.**, հետևաբար տվյալ պայմաններում Պայմանագրի 5-րդ կետի 5.2-րդ կետում նշված ժամկետում՝ Ընկերության կողմից 18.04.2019թ. և 24.04.2019թ. ներկայացված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուն օբյեկտիվորեն հնարավորություն չէր կարող ունենալ ընդունելու կամ մերժելու նշված հանձնման-ընդունման արձանագրությունները, քանի որ նշված ժամանակահատվածում իրականացվել է փորձաքննություն՝ ապրանքի որակի՝ Պայմանագրի տեխնիկական

բնութագրին համապատասխանելու հարցը պարզելու նպատակով, որից հետո միայն փորձաքննության արդյունքներով պայմանավորված Պատվիրատուն կարող էր ընդունել ապրանքը կամ մերժել ապրանքի ընդունումը: Ուստի հայտնում եմ, որ Պայմանագրի 5-րդ կետի 5.4-րդ ենթակետի դրույթը կիրառելի չէ սույն գործի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8665-2019 գրությամբ «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աշոտ Ղարագյոզյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**